Известия НАН РА, Науки о Земле, 1999, **LII**, *№2-3, 113-115*

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ.Գ.ՄԱՂԱՔՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

1999թ. հուլիսի 22-ին ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում կայացավ հանրաճանաչ և ականավոր գիտնական, գիտության փայլուն կազմակերպիչ և վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Հ.Գ.Մաղաքյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտաժողով: Գիտաժողովում երկրաբանական տարբեր աշխատակիցների կողմից կարդացվեցին 17 զեկուցում, նվիրված նրա կյանքին ու գիտական գործունեությանը, միներալային հումքի տարբեր տեսակների ու տեղայնացման պայմանների ուսումնասիրման արդյունքներին, առանձին հանքային դաշտերի ու շրջանների երկրաբանական, տեկտոնական ու երկրադինամիկական պայմաններին և նրանց հեռանկարներին ու այլ հարցերի, որոնց մասին բերվում է ստորև:

Գիտաժողովում ներածական խոսքով հանդես եկավ ԵԳԻ տնօրեն, ակադեմիկոս Ռ.Ջրբաշյանը, որն ընդգծեց Հ.Գ.Մաղաքյանի որպես գիտնական, գիտության կազմակերպչի ու վաստակավոր գործչի, մեծ մարդու կարևոր հատկանիշները և նվաճումները: Նա բարձր գնահատեց Հ.Գ.Մաղաքյանի մետաղածնության, հանքավայրերի երկրաբանության, միներալոգիայի, միներագրաֆիայի ու երկրաքիմիայի ասպարեզում կատարած գիտական հետազոտությունների արդյունքները և այն համարեց կարևոր ներդրում հանքաբանության տեսության մեջ: Նա կարևորեց նաև նրա դերը երկրաբան-հանքաբան գիտնականների պատրաստման գործում:

Միներալային հումքի ուսումնասիրման և հանքավայրերի մասին Հ.Գ.Մաղաքյանի ու նրա դպրոցի նվաճումների մասին մանրամասնորեն խոսվեց Շ.Ամիրյանի և Ա.Ֆարամազյանի զեկուցման մեջ: Նշվեց այն կարևոր ներդրումը, որը վարեց մետաղային հանքավայրերի երկրաբանության, մետաղածնության, երկրաքիմիայի, միներալոգիայի ու միներագրաֆիայի բնագավառում: Մետաղածնության ու մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրման բնագավառում Հ.Գ.Մաղաքյանի հետազոտություններն ունեցան բացառիկ ու համընդհանուր ճանաչում գտած աշխատանքներ, որոնք լայնորեն օգտագործվեցին տարբեր երկրների գիտնականների կողմից: Նրանց արդյունքներն ունեցան մի քանի հրատարակություն: Նրա աշակերտների մանրամասն հետազոտությունները Հայաստանի Հանրապետության հանքավայրերում կարևոր դեր խաղացին հանրապետության հանքային հումքի լիարժեք գնահատման ու նրա բազայի ընդարձակման գործում: Այդ հետազոտությունների արդյունքները հրատարակվեցին բազմաթիվ մենագրություններում և հոդվածներում, որոնք կարևոր ներդրում են հանքային գիտության տեսության զարգացման ասպարեզում և երկար ժամանակ կծառայեն երկրաբաններին, միներոլոգներին, երկրաքիմիկներին, տեխնոլոգներին, տնտեսագետներին ու ուսանողներին:

Գ.Մեժլումյանի զեկուցումը նվիրված էր Հայաստանի Հանրապետության տարածքի երկաթի հանքավայրերի առանձնահատկությունների բնութագրմանը, նրանց դասակարգմանը և արդյունաբերական գնահատմանը: Նա առաջ է քաշում Հայաստանում սև մետալուրգիայի կազմակերպման հարցը:

Դիլիջան-Արջուտ հանքայնացման գոտու երկրաբանական կառուցվածքին ու հանքայնացման տեղայնացման օրինաչափություններին էր նվիրված Գ.Հարությունյանի և Ռ.Մովսիսյանի զեկուցումը, որտեղ փորձ է արվում նորովի գնահատել որոշ հանքավայրերի հասակի ու երկրաբանական կառուցվածքի հարցերը: Առաջ քաշված տեսակետը միանշանակ չընդունվեց գիտաժողովի մասնակիցների կողմից:

Լ.Մելիքյանը կատարած ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորում է Արմանիս հանքավայրի տեկտոնո-կառուցվածքային առանձնահատկությունները: Նրա տեսակետը հակասում է նախորդ ուսումնասիրողների տվյալներին:

Պ.Ալոյանի հաղորդումը վերաբերվում էր հանքայնացման արդյունաբերական տիպայնացման ֆորմացիոն-տեխնոլոգիական հիմունքների մշակմանը: Առաջարկված մեթոդների կիրառումը հանքավայրերի արդյունահանման և հանքաքարի մշակման արդյունավետությունը բարձրացնելու կարևոր գործոն կարող է հանդիսանալ:

Գ.Շեխյանի, Ռ.Մովսիսյանի ու Կ.Մարտիկյանի զեկուցման մեջ առաջարկվում է պինդ օգտակար հանածոների արդյունաբերական նշանակության գնահատման գործում ցուցաբերել նոր մոտեցումներ, ելնելով շուկայական հարաբերությունների առկայությունից:

Հայաստանի տարածքի ոչ մետաղային օգտակար հանածոների կիրառման հեռանկարներին էր նվիրված Պ.Բարտիկյանի զեկուցումը: Ըստ նրա մի շարք քարատեսակներ կարող են հումք հանդիսանալ պարարտանյութերի, ապակու, սալիկների, կղմինդրի և այլ արտադրանքների համար: Զեկուցումն արժանացավ գիտաժողովի մասնակիցների բարձր գնահատականին:

Թ.Ավագյանի զեկուցումը, ինչպես միշտ, նվիրված էր դիատոմիտային հանքավայրերի հեռանկարային գնահատմանը:

Հարավային Զանգեզուրի արդյունաբերական պղինձ-մոլիբդենային հանքավայրերի առաջացման երկրաբանա-կառուցվածքային պայմանների մանրամասներին էր նվիրված Ռ.Տայանի, Ս.Սարգսյանի, Մ.Հարությունյանի զեկուցումը: Հեղինակները հանքառաջացման և նրա տեղայնացման գործում կարևորում են միջօրեական տարածման ռեգիոնալ և նրա սահմաններում լոկալ ստրուկտուրաների դերը: Բացասական վերաբերմունքի արժանացավ հեղինակների տեսակետը պղինձ-մոլիբդենային գոտու ոչ թե հյուսիս-արևմտյան, ինչպես ընդունված է մինչև այժմ, այլ դեպի հյուսիս ձգվելու մասին տեսակետը, որը ոչ մի երկրաբանական ու մետաղածին հիմք չունի:

Մ.Հարությունյանի հաղորդումը նվիրված էր Քաջարան հանքավայրի մետասոմատիկ առաջացումների զոնալականությանը: Եթե ընդունենք, որ հանքայնացման յուրաքանչյուր փուլ ուղեկցվում է յուրահատուկ մետասոմատիտներով, ապա նրանց զոնալ տարածումը պետք է համընկներ հանքայնացման զոնալականությանը, սակայն այդ հեղինակների կողմից լիովին չապացուցվեց: Այս հարցի պարզաբանումը պահանջում է ավելի մանրակրկիտ հետազոտություններ, քանի որ հանքայնացման պրոցեսում առանձնացվում են մի շարք փուլեր, որոնք իրենց ուղեկից մետասոմատիտներով իրար վրա դրվելով խճճում են մետասոմատիկ պրոցեսների արդյունքները, դարձնելով այն ավելի բարդ ու դժվար բացատրելի:

Դիլիջան-Տանձուտ հանքադաշտի երկրաբանական ու ստրուկտուրային առանձնահատկությունների ու ոսկեբերության հեռանկարների մասին էր Ֆ.Շամցյանի հաղորդումը: Հիմնականում հենվելով հին տվյալների վրա նա լիովին չբացատրեց ոսկեբերության տեսակետից կարևոր հանքատեսակների դերը և նրանց հեռանկարային տարածքները:

Իջևանի քարածխի հանքավայրի շրջանակներում պղինձ-ոսկի հանքայնացման մասին էր Հ.Գյոլեցյանի հաղորդումը: Բերված տվյալներն այնքան էլ համոզեցուցիչ չէին և նույնիսկ կոնկրետ քարածխի հանքավայրին չէին վերաբերվում:

Ալավերդու անտիկլինորիումի և հանքային շրջանի ձևավորման երկրադինամիկ պայմաններին ու երկրաբանական կառուցվածքին էր նվիրված Հ.Թումանյանի զեկուցումը: Նրա կողմից շարադրված եզրակացությունները հիմնված էին եղած նյութի ռեգիոնալ անալիզի վրա և շատ բա-

ներով հակասում եղած տվյալներին: Այս ասպարեզում անհրաժեշտ են լուրջ հետազոտություններ:

Հայաստանի տարածքի օֆիոլիտային հիմքով պարզ կղզային աղեղի հրաբխականության հարցերին էր նվիրված Հ.Ղազարյանի հաղորդումը:

Կ.Մուրադյանի հաղորդումը վերաբերվում էր օգտակար հանածոների համալիր օգտագործման և բնապահպանության հիմնահարցերին:

Ընդհանուր բանավեճում ելույթ ունեցան մի շարք գիտնականներ կարդացված զեկուցումների այս կամ այն հարցի վերաբերյալ: Նշվեց գիտաժողովի կարևորությունը և առանձին հարցերի վերաբերյալ լայն մասշտաբի սեմինարներ անցկացնելու անհրաժեշտությունը:

Շ.Հ.Ամիրյան, Ա.Ս.Ֆարամազյան